

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ

Սիրելի շրջանավարտներ,
Շնորհավորում են ձեզ 2015-2016 ուսումնական տարվա վերջին դասի կապակցությամբ: Այս օրը յուրաքանչյուրիդ համար տոնական է:

Ավարտելով դպրոցը՝ դուք մուտք եք գործում փորձություններով և ակնկալիքներով լի նոր կյանք:

Գիտեք, թե ինչպիսի ծանր փորձության ենթարկվեց հայ ժողովուրդը ապրիլի 1-ին՝ ազերիների կողմից իրականացված ուխտադրուժ հարձակման արդյունքում:

Դպրոցի մեր շրջանավարտները, որ իրենց պարտքն էին կատարում մեր հայրենիքի պաշտպանության համար, հերոսացան՝ թշնամուն ցույց տալով իրենց բազկի ուժը:

Դժբախտաբար ունեցանք զոհեր:

Սիրելի շրջանավարտներ ես գլուխ են խոնարհում ձեր ուսուցիչների առջև, ովքեր արել են ամեն ինչ, որ դուք դառնաք հայրենիքի նվիրյալներ:

Ձեր ծնողները, համայնքն ու պետությունը արել են հնարավորը, որ դուք ստանաք որակյալ կրթություն, պիտանի լինեք հասարակությանը, լինեք լիարժեք անհատ և քաղաքացի:

Երջանիկ եղեք: Բարի երթ ձեզ՝ այս դժվարին, փորձություններով լի ու պատասխանատու պահին:

Հարգանքներով՝

Մասիսի քաղաքապետ



ՀԱԿՈՒՅԱՆ

27. 05. 2016